ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 29.08.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/56

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի

Մասնակցությամբ «Տերմինալ-Պլյուս» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչներ՝

Ս. Մխիթարյանի (լիազորագիր տրված՝ 24.06.2019թ.)

Հ. Թադևոսյանի (լիազորագիր տրված՝ 31.07.2019թ.)

Հ. Ենգոյանի (լիազորագիր տրված՝ 01.08.2019թ.)

Ա.Պարանյանի (լիազորագիր տրված՝ 01.08.2019թ.)

Քննելով «Հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրման գրասենյակ» ՊՈԱԿ-ի կարիքների համար հսկիչ-դրամարկղային մեքենաների ձեռքբերման նպատակով հայտարարված ՀԴՄՆԳ-ԲՄԱՊՁԲ-19/1 ծածկագրով բաց մրցույթի շրջանակներում «Տերմինալ-Պլյուս» ՍՊԸ-ի (հետայսու նաև՝ Ընկերությունը) կողմից 30.07.2019թ. ներկայացված և 30.07.2019թ. վարույթ ընդունված բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2019/56 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. «Տերմինալ-Պլյուս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Տերմինալ-Պլյուս» ՍՊԸ-ն 30.07.2019թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«ՀԴՄՆԳ-Բ1Ո1ՊՁԲ-19/1» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 26.07.2019թ. հրապարակված թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Տերմինալ-Պլյուս» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը գնահատվել է անբավարար և մերժվել է, և միաժամանակ որոշվել է վերոհիշյալ մրցույթին մասնակցած մյուս մասնակից «Պաքս Թեքնոլոջի Ամիթիդ» ընկերությանը 31.07.2019թ. ժամը 12:00-ին հրավիրել գների նվազեցման շուրջ բանակցությունների իրականացմանը:

«Հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրման գրասենյակ» ՊՈԱԿ-ի (հետայսու նաև՝ Պատվիրատու) գնահատող հանձնաժողովի՝ Ընկերությանը վերաբերելի մասով վերոհիշյալ բովանդակությամբ որոշում կայացնելու համար հիմք է հանդիսացել Ընկերության կողմից ներկայացրած հայտում՝ մասնավորապես գնային առաջարկում, Ընկերության անվանման սխալ կամ ոչ լիարժեք հիշատակման դիտարկումը:

Ընկերությունը հայտնել է, որ չընդունելով հանձնաժողովի որոշումը՝ դրա ոչ իրավաչափ լինելու հիմքով, և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 46-րդ, 47-րդ և 50-րդ հոդվածների պահանջներով՝ ներկայացնում է սույն բողոքը, որում նախ կնշվեն բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերն, այնուհետև անդրադարձ կկատարվի Պատվիրատուի գնահատման հանձնաժողովի որոշման մեջ տեղ գտած անընդունելի և խեղաթյուրված փաստերին՝ իրավական և փաստական հիմնավորումներով:

ա) Ընկերությունը նշել է բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող հետևյալ փաստերը.

1. Ընկերությունը հանդիսանում է Ռուսաստանի Դաշնության ռեզիդենտ, որի շահերը Հայաստանում ներկայացնում է Սարգիս Մխիթարյանը:

2. Պատվիրատուի կարիքների համար հսկիչ-դրամարկղային մեքենաների ձեռքբերման պայմանագրի կնքման նպատակով Պատվիրատուի գնման հանձնաժողովի 14.05.2019թ. թիվ 1 որոշմամբ հայտարարվել է «ՀԳՄՆԳ-ԲՄԱՊՁԲ-19/1» ծածկագրով, բաց մրցույթի գնման ընթացակարգ: Մրցույթի հայտարարման նպատակն էր՝ բավարարել

ներկա պահին հսկիչ-դրամարկղային մեքենաների պահանջարկը, որը ըստ մրցութային փաստաթղթերի, կազմում է 9 000 սարք:

3. Մրցույթին մասնակցելու հայտեր են ներկայացրել «Տերմինալ-Պլյուս» ՍՊԸ-ն և «Պաքս Թեքնոլոջի Ամիթիդ» ընկերությունը:

4. Մրցույթում Ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկը կազմել է 905 737 500 (ինը հարյուր հինգ միլիոն յոթ հարյուր երեսունյոթ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ՝ 9 000 հատ հսկիչ-դրամարկղային մեքենաների համար, այսինքն՝ յուրաքանչյուր սարքի համար առաջարկվել է 100 637.5 (մեկ հարյուր հազար վեց հարյուր երեսունյոթ ամբողջ հինգ տասնորդական) ՀՀ դրամ: Հարկ է նշել, որ առաջարկվող սարքերն ամբողջությամբ համապատասխանում են Մրցույթի պայմաններով սահմանված տեխնիկական պահանջներին (4 G ցանցին համակցման հնարավորություն, POS տերմինալի առկայություն և այլն):

5. Մրցույթի հայտերի բացման նպատակով նախապես հայտարարված նիստի օրը՝ 24.06.2019թ., հրապարակվել են ներկայացված գնային առաջարկներն. Ընկերության կողմից առաջարկված գնային առաջարկը շուրջ 200 000 000 (երկու հարյուր միլիոն) ՀՀ դրամով ավելի ցածր է եղել, քան մյուս մասնակցի գնային առաջարկը, սակայն որոշում չի կայացվել հաղթողի վերաբերյալ՝ առաջարկված գների նվազեցման նպատակով մասնակիցների հետ միաժամանակյա բանակցություններ վարելու անհրաժեշտությամբ պայմանավորված: Ընկերության ներկայացուցիչը, տվյալ նիստում հայտնել է Ընկերության պատրաստակամությունը նվազեցնելու ներկայացված գնային առաջարկը, նմանատիպ առաջարկ չի ներկայացվել Մրցույթի մյուս մասնակցի կողմից, չնայած դրան գնի նվազեցման նպատակով այդ նիստում տեղի ունեցած բանակցությունները համարվել են չկայացած՝ մասնակիցների ներկայացուցիչների մոտ համապատասխան լիազորությունների բացակայության պատճառաբանությամբ:

6.Նույն օրը՝ 24.06.2019թ., էլեկտրոնային փոստով ստացվել է ծանուցում, առ այն որ հանձնաժողովի նիստը կասեցվել է, ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 40-րդ կետի 5-րդ ենթակետի դրույթներին համապատասխան, և հրավիրվել է նոր նիստ՝ 28.06,2019թ. ժամը 12:00-ին՝ միաժամանակյա գների նվազեցման բանակցություններ կազմակերպելու նպատակով:

7. 28.06.2019թ. նիստի ընթացքում, մինչ բանակցությունները սկսելը, տեղեկացրել են, որ Մրցույթը կասեցվել է, ընդ որում որևէ տեղեկություն չի տրամադրվել կասեցման պատճառների և օրենսդրական հիմքերի վերաբերյալ, միայն նշվել է, որ հետագա զարգացումների վերաբերյալ կտեղեկացնեն:

8. Ընկերության ներկայացուցիչը բազմիցս այցելել է Պատվիրատուի գրասենյակ և փորձել պարզաբանում ստանալ մրցույթի հետ կապված զարգացումների մասին, սակայն ապարդյուն. Տեղեկացրել են, որ պարզաբանում ստանալու նպատակով հարցում է կատարվել, և ոչինչ ավելին չեն կարող հայտնել:

9. Ընկերությունը օգտվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթներով ընձեռնված իրավունքից՝ պաշտոնական հարցում է հասցեագրել Պատվիրատուին՝ խնդրելով տրամադրելու գնման հանձնաժողովի կողմից կազմված արձանագրությունների պատճենները, տեղեկատվություն՝ մրցույթի կասեցման պատճառների և օրենսդրական հիմքերի վերաբերյալ , ևս մեկ անգամ, արդեն գրավոր ձևով հայտնել է իր պատրաստականությունը նվազեցնելու գնային առաջարկն այն սահմանելով 899 500 000 (ութ հարյուր իննսունինը միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ: Ի պատասխան վերոհիշյալ գրության, որևէ փաստաթուղթ կամ վերաբերելի տեղեկատվություն չի տրամադրվել, միայն պատասխանել են, որ մրցույթը կասեցվել է և հանձնաժողովը հարց է ուղղել ՀՀ ֆինանսների նախարարություն, չի նշվել ՀՀ ֆինանսների նախարարություն պարզաբանում ստանալու համար սահմանված օրենսդրական հիմքն, այն հարցը՝ որի շուրջ առաջացել է պարզաբանում ստանալու անհրաժեշտությունը:

10. Չստանալով սպառիչ պատասխան՝ Ընկերությունը ևս մեկ անգամ դիմել է Պատվիրատուին՝ խնդրելով պատասխանել նախորդ նամակում բարձրացված բազմաթիվ հարցերին, ինչպես նաև հրապարակել պաշտոնական տվյալներ մրցույթի մասին: Ցավոք, 09.07.2019թ. Ընկերությունը ստացել է պատասխան նամակ Պատվիրատուից որում ևս չեն եղել ոչ պարզաբանումներ, ոչ պատասխաններ Ընկերության կողմից բարձրացված հարցերին և միայն նշվել է այն, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից պարզաբանումներ ստանալուց հետո կնշանակվի նոր նիստ, որի մասին մեզ կտեղեկացնեն լրացուցիչ, սակայն մինչև օրս մենք չենք ստացել որևէ տեղեկություն:

11. 17.07.2019թ. Ընկերությունն ստացել է ծանուցում, որտեղ գնահատող հանձնաժողովի նախագահ Հ. Զաքարյանը նշել է, որ Ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերում հայտնաբերվել է «ն» տառի բացակայությունը և խնդրել է ներկայացնել պարզաբանում: Ընկերությունն էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացրել է

պարզաբանում առ այն, որ «ն» տառի բացակայությունը եղել է միայն վրիպակ, և որ Ընկերության անվանումը մրցույթի մասնակցության նպատակով ներկայացված այլ փաստաթղթերում, մասնավորապես՝ ՀՎՀՀ–ում, կնիքի վրա և այլն նշված է ճիշտ:

12. Մրցույթի հայտերի բացման օրվանից ավելի քան մեկ ամիս անց՝ 26.07.2019թ., հրապարակվել է Պատվիրատուի գնահատման հանձնաժողովի թիվ 2 արձանագրությունը, որով Ընկերության ներկայացրած հայտում՝ մասնավորապես գնային առաջարկում, դիտարկվել են անհամապատասխանություններ Ընկերության անվանման առնչությամբ, այն որակվել է սխալ լրացված կամ ոչ լիարժեք և արդյունքում հայտը գնահատվել է անբավարար և մերժվել է:

բ) Պատվիրատուի գնահատման հանձնաժողովի որոշման մեջ տեղ գտած անընդունելի և խեղաթյուրված փաստերն՝ իրավական և փաստական հիմնավորումներով.

Ընկերությունը անդրադարձել է Պատվիրատուի գնահատման հանձնաժողովի 26.07.2019թ., հրապարակված 2 արձանագրության մեջ տեղ գտած անհամապատասխանություններին, խեղաթյուրումներին և հանձնաժողովի անդամների գործողություններին, որոնք Ընկերության կարծիքով պարունակում են քրեական հետապնդում հարուցելու հիմքեր, ինչի առնչությամբ կներկայացվի համապատասխան հայտարարություն: Արձանագրության նախաբանում նշվել է, որ վերոհիշյալ հանձնաժողովի նիստերը կայացել են 24.06.2019թ.-25.07.2019թ., այսինքն՝ տվյալ արձանագրությունից պարզ չէ թե այն կոնկրետ որ նիստի արձանագրություն է, մասնավորապես Օրենքի 33-րդ հոդվածի դրույթներով հստակ կանոնակարգված են հայտերի բացման նպատակով հրավիրվելիք նիստի ընթացքում իրականացման ենթակա գործողությունների բովանդակությունը, այդ թվում արձանագրություն կազմելու պահանջը և այն հրապարակելու ժամկետն է կարգը: Կոնկրետ դեպքում մրցույթի հայտերի բացման նպատակով նիստը կայացել է 24.06.2019թ., սակայն կոնկրետ այդ նիստի արձանագրություն չի կազմվել և հրապարակվել, ինչպիսի հանգամանքը հակասում է Օրենքի 33-րդ հոդվածի 8-րդ մասի դրույթներին, արձանագրություն չի կազմվել (չի հրապարակվել) նաև 28.06.2019թ. կայացած նիստի համար, դեռ ավելին 25.07.2019թ. կայացած նիստի վայրի և ժամանակի մասին Ընկերությունը ընդհանրապես չի տեղեկացվել: Արձանագրությունից պարզ է դառնում, որ հանձնաժողովի նիստին մասնակցել է և հայտարարությամբ հանդես է եկել Առաքելյան ազգանվանմամբ ինչ-որ անձնավորություն, ով ընդգրկված չէ հանձնաժողովի կազմում:

Այժմ ըստ էության. համաձայն՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 41-րդ կետի դրույթների՝ եթե հայտերի բացման նիստի

ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատվող փաստաթղթերը կամ դրանց մի մասը ներկայացված են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով և հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Վերոհիշյալ իրավակարգավորումներից բխում է, որ նախ անհամապատասխանությունները կարող են հայտնաբերվել մինչև հայտերի բացման նիստը, դրա ընթացքում բացահայտվեն, որից հետո այդ հիմքով նիստը մեկ աշխատանքային օրով ենթակա է կասեցման, իսկ նույն կարգի 41-րդ կետով սահմանված է, որ եթե այդ ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար:

Կոնկրետ դեպքում հայտերի բացման նպատակով նիստին, որը կայացել է 24.06.2019թ., անհամապատասխանության վերաբերյալ որևէ դիտարկում չի կատարվել, այլ ընդհակառակը, Ընկերության հայտը որակվել է բավարար և համապատասխանող մրցույթի պայմաններին, ավելին Ընկերությունը հրավեր է ստացել մասնակցելու 28.06.2019թ. ժամը 12:00-ին՝ կայանալիք միաժամանակյա գների նվազեցման բանակցություններին:

Միայն 17.07.2019թ., հանձնաժողովից նամակ է ստացվել անհամապատասխանության պարզաբանման առնչությամբ, ինչի առնչությամբ Ընկերությունը, հաջորդ օրը 18.07.2019թ. պատասխանել է նշելով, որ վրիպակը առաջացել է զուտ թարգմանության ընթացքում և կրկին պատրաստականություն հայտնել՝ ներկայացնելու բոլոր փաստաթղթերը:

Ընկերության կողմից ներկայացված հայտը գնահատվել է անբավարար և մերժվել, այն դեպքում երբ Մրցույթը հայտարարվել է նույնատիպ վրիպակով և մրցութային փաստաթղթերի մեջ, որպես Պատվիրատու նշել է «ՀՍԿԻԶ-ԴԸԱՄԱՐԿՂԱՅԻՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ» ՊԱԱԿ, այնինչ պետք է լիներ ՊՈԱԿ: Նշված վրիպակը կարելի է տեսնել բաց մրցույթի մասին հայտարարության մեջ, Մրցույթի

հրավերի մեջ, հայտերի գրանցամատյանի մեջ, բաց Մրցույթի հրավերին կից Հավելված 1-ի մեջ:

Ավելին, Պատվիրատուի կողմից 26.07.2019թ. հրապարակված թիվ 2 որոշման մեջ, երկրորդ մասնակցի անունը լրացվել է որպես Պաքս Թեքնոլոջի Լիմիթեդ, այն դեպքում երբ, 24.06.2019թ. Ընկերությանը և Պաքս Թեքնոլոջի Ըիմիթ**ե**դ ընկերությանը գների նվազեցման շուրջ բանակցությունների հրավերում նշված է Պաքս Թեքնոլոջի Աիմիթ**ի**դ: Նույն հրավերում Ընկերության անվանումը նշված է եղել «Տերմինալ-Պլյուս» ՍՊԸ:

Ավելին, Ընկերության կողմից առաջարկվող գնի ու Մրցույթի մասնակից այլ ընկերությունների կողմից առաջարկվող գների համեմատությունից ակներև է, որ ամենացածր գինն առաջարկել է Ընկերությունը և ավելին, Ընկերությունը պատրաստակամություն է հայտնել հետագայում նվազեցնել գնային առաջարկում ներկայացված գինը:

Ամփոփելով վերը նշվածը, Ընկերությունը խնդրել է հաշվի առնելով վերոնշյալ իրավական և փաստական հանգամանքները և ղեկավարվելով Օրենքի 46-րդ, 47-րդ և 50-րդ հոդվածների դրույթներով՝ բավարարել բողոքը և պարտավորեցնել մրցույթի գնահատող հանձնաժողովին դադարեցնել իր 24.06.2019թ.–25.07.2019 նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված՝ Ընկերության հայտը մերժելու մասին որոշումը և մրցույթի գնահատող հանձնաժողովին պարտավորեցնել վերականգնել Ընկերության մասնակցությունը գների նվազեցման շուրջ բանակցություններին:

Ի լրումն ներկայացված բողոքի Ընկերությունը պնդել է բողոքով ներկայացված դիրքորոշումը:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 02.08.2019թ. ժամը 10:05-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. <u>«Հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրման գրասենյակ» ՊՈԱԿ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

«Հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրման գրասենյակ» ՊՈԱԿ-ը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին է ներկայացրել «ՀԴՄՆԳ-ԲՄԱՊՁԲ-19/1» ծածկագրով ընթացակարգի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 02.08.2019թ. ժամը 10:05-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը նիստին:

3. ԳԲՔԱ-ՆԳ-2019/56 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ԳԲՔԱ-ՆԳ-2019/56 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրման գրասենյակ» ՊՈԱԿ-ի կարիքների համար կազմակերպվել է ՀԴՄՆԳ-ԲՄԱՊՁԲ-19/1 ծածկագրով բաց մրցույթ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Տերմինալ-Պլյուս» ՍՊԸ-ն:
2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 26.07.2019թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Տերմինալ-Պլյուս» ՍՊԸ-ի հայտը գնահատել է անբավարար և մերժել, այն հիմնավորմամբ, որ վերջինիս կողմից ներկայացված հայտում՝ մասնավորապես գնային առաջարկում, մասնակցի անվանումը սխալ է լրացված կամ ոչ լիարժեք:
3. Նույն արձանագրությամբ կայացված որոշմամբ որոշվել է ծանուցել Պաքս Թեքնոլոջի Լիմիթեդին՝ հրավիրելով 31.07.2019թ. նախատեսված գների նվազեցման շուրջ բանակցություններին:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Տերմինալ-Պլյուս» ՍՊԸ-ի 30.07.2019թ. բողոքը՝ կից փաստաթղթերով, ՀԴՄՆԳ-ԲՄԱՊՁԲ-19/1 ծածկագրով բաց մրցույթի հրավերը, գործով առկա փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ***ոչ խտրական հիմունքներով կազմակերպում***.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ***գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:***

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ Մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: ***Հայտը ներառում է մասնակցի հաստատած գնային առաջարկը***:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:***

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում՝ ***հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում*** բացակայում են ***գնային առաջարկը*** և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ***ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:*** Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

«Հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրման գրասենյակ» ՊՈԱԿ-ի կարիքների համար կազմակերպվել է ՀԴՄՆԳ-ԲՄԱՊՁԲ-19/1 ծածկագրով բաց մրցույթ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Տերմինալ-Պլյուս» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 26.07.2019թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Տերմինալ-Պլյուս» ՍՊԸ-ի հայտը գնահատել է անբավարար և մերժել, այն հիմնավորմամբ, որ վերջինիս կողմից ներկայացված հայտում՝ մասնավորապես գնային առաջարկում, մասնակցի անվանումը լրացված է սխալ կամ ոչ լիարժեք:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ գնահատող հանձնաժողովի կողմից «Տերմինալ-Պլյուս» ՍՊԸ-ի հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ Ընկերության հայտում նշված հայերեն լեզվով գրված անվանումը և ռուսերեն լեզվով կնիքի վրա նշված Ընկերության ռուսերեն անվանումը տարբերվում են, մասնավորապես՝ հայտում Ընկերության անվանումը նշված է եղել «Տերմիալ-Պլյուս» ՍՊԸ, իսկ կնիքի վրա՝ ООО «Терминал-Плюс»:

Միաժամանակ ուսումնասիրելով «Տերմինալ-Պլյուս» ՍՊԸ-ի հայտով ներկայացված փաստաթղթերը, արձանագրում եմ, որ Ընկերության կողմից ներկայացված ոչ միայն գնային առաջարկի, այլ նաև հայտով ներկայացված բոլոր փաստաթղթերի վրա առկա է Ընկերության ռուսերեն լեզվով կնիքը, որի վրա նշված է ООО «Терминал-Плюс», իսկ մասնակցության հայտի թիվ 1 Հավելվածում նշված է նաև Ընկերության հարկ վճարողի հաշվառման համարը, ուստի գտնում եմ, որ նման պայմաններում գնահատող հանձնաժողովը արձանագրելով անհամապատասխանություն Ընկերության կողմից հայտի փաստաթղթերի հայերեն լեզվով գրված անվանման և փաստաթղթերի վրա առկա ռուսերեն լեզվով կնիքի վրա նշված անվանման միջև, կարող էր կիրառել Կարգի 67-րդ կետով սահմանված պահանջը, այն է՝ Կարգի 67-րդ կետը սահմանում է, որ գնահատող հանձնաժողովը կարող է ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Նման հարցում ուղարկվելու դեպքում համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինները հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում են գրավոր եզրակացություն: Եթե մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է:

Դրա հետ մեկտեղ, ամփոփելով վերը նշված փաստերը, գտնում եմ, որ «Տերմինալ-Պլյուս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում մասնակցի անվանման մեջ «ն» տառի բացակայությունը չի կարող դիտարկվել էական վրիպակ վերջինիս հայտը մերժելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Տերմինալ-Պլյուս» ՍՊԸ-ի կողմից 30.07.2019թ. ներկայացված բողոքը բավարարել՝

1. Պարտավորեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել «Տերմինալ-Պլյուս» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

2. Պարտավորեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին վերականգնել Ընկերության մասնակցությունը գների նվազեցման շուրջ բանակցություններին:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**